ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 5 — ՄԱՅԻՍ 1888

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՍԱԿԱՆ

Նը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը:
Բաժանորդագին է կանխիկ վճարելի՝ Տարեկան 8 ֆր. — 4 դր.: — Վեցամսեայ՝ 5 ֆր. — 2 դր. 50 կոպ.:
Մէկ թիւ առանձին՝ կը վաճառուի 1 ֆր. — 50 կոպ.:

Խմբագրութեան կենդրոնատեղին է՝ Վիեննա, Միխիթարեան Միաբանութեան Մայր Վանքը:
Ճարտուղարութեան վրայ է:
Ծանուցմունքն առանձին սակարկութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Ցառաղարձութեան խնդիր: — Հետազօտութիւնք նախնեաց ռամիկներին վրայ:
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Ամմոտ Եվայէր-Վերլենֆելտ եւ Ծրկիր Հայոց:
ԳՐԱԿԱՆ — Ազգային հրատարակութիւնք 1887 տարւոյ:
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ — Պատմութիւն Հայոց:
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ — Ճաշակ Հունգարահայոց լեզուին:
ԱՐՈՒԵՍՏԻՍԱԿԱՆ
ՅՕԳԱԿՐԱԿԱՆ — Նորահատ հայերէն տառեր:
ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՑ (Պատկերազարդ:)
ԲՈՐՈՅԱԿԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ — Գաւեսիլեա:
ՍՈՒԼԵՒՈՅԼՔ
ՆՈՐԱՎՈՒՐՔ — ՅՆՅԵՆԱԿԱՆ — ՄԱՆՐԱՎՈՒՐՔ
ՓՈՔՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ (Պատկերազարդ:)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Չէինք բաղձար միակերպ լեզուական-բանասիրական խնդիրներով թերթս բեռնաւորել, կամ — ընտանեկան բացատրութեամբ՝ — գարձեալ բանավէճերի խրդել. այնպէս որ ընթերցողաց մէկ մասին կարեւոր երեւցածն ուրիշներուն թերեւս տաղտուկ բերէ: Սակայն անպակաս հեռագրեան յերեւան ելած նորանոր խնդիրներ եւ առաջարկութիւններ ի նպաստ գրաւորական զարգացման ազգին՝ յորդորմամբ կ'ընեն զմեզ անտարբեր չմնալ ժամանակիս օրուէ մտաւորական շարժմանցն առջեւ. — թէպէտ երբեմն տեղեաց հեռաւորութեամբ եւ թերթիս թուոյն սակաւ միջոցաւ բացատրութեամբն՝ անագան կը հասնի մեր ձայնը:

ՅԱՌԱՂԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Վրուէները նեռաւելէն ետեւ դժուար է այսպէս անագան ի բեմն ելլել կամ նոր վճիռ տալ, մանաւանդ քուէարկութեան ելլիցն անտեղեակ խօսողի մը: Բայց կը վերնայ անպատեհութիւնը՝ նկատելով որ մեր գիտումը չէ ոչ քըեւալքը չէզոքացրնել եւ ոչ նոր քուէ տալ, թող թէ վճիռ արձակել. այլ կը բաղձանք որ՝ կանուխ թէ անագան՝ խնդրոյ էութեան լաւ թափանցուի, եւ գործողութիւնք ըստ կարի գիտակցութեամբ կատարուին:

Հայերէն այբուբենից հարազատ հնչման վրայ վերջին ժամանակներս քանի մ՝ անգամ խընդիրներ հրապարակաւ յուզուելէն ետեւ՝ Կ. պոլսոյ Աբէ-եէ օրագրին 15/3 Մարտ թուոյն երկմանեայ "Առաջարկութիւն" մը կը հանուի Ուսումնական խորհրդոյն առջեւ, 1) Արեւմտեայ Հայոց արտաբերութիւնն եւ 2) Օտար բառերու Հայերէն ուղղագրութիւնն ըստ Նոթինեաց պատրիարքարանի յերիւրելու:

Ցայսմի է թէ այս օրս, իբր գարէ մ՝ի վեր, ինչ կ'իմացուի Նոթինեաց պատրիարքարանի ըսելով. — այսինքն՝ կ'իմացուի օտարազգի բառից յարմարագրութեան մէջ գլխաւորաբար Հայերէն բաղձայններու Միջակն ու Նուրբն իրարու փոխանցել, որուն մասն է նաեւ ղ եւ լ գրերուն կերպով մ՝իրար փոխանակելը:

Ցայսմի է գարձեալ՝ թէ այս խնդրոյս վրայ ճառելով՝ խօսքն առ Արեւմտեայս կը Հայի կամ անոնց կ'ուղղուի սովորաբար[1], սակայն ունին

[1] Արեւմտեայ ընթերցողաց կը յանձնուի՝ որ լաւին գրով նշանակուած հնչմունքն ընդհանուր լատինական կանոնաւ նկատեն, ինչպէս առհասարակ ընդունուած է բանասիրութեան մէջ, եւ ոչ մասնական գաղղիական ընթերցանութեան օրինաց:

digitised by A.R.A.R.@